

Գ Ո Ր Ծ Ա Ռ ՈՒ Յ Թ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի (այսուհետ՝ նախարար) և աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն գործառույթներով, ինչպես նաև վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչությունը իր գործունեության ընթացքում համագործակցում է նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև այլ պետական կառավարման մարմինների հետ:

4. Վարչության աշխատողները կարող են համատեղության կարգով ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում՝ առանց լրացուցիչ վճարի:

5. Վարչության աշխատանքների ընդհանուր համակարգումն իրականացնում է նախարարը:

6. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ վարչության պետի տեղակալը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի հանձնարարությամբ:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

7. Նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգությունն ապահովելն է:

## III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչության գործառույթներն են՝

1) նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում համակարգչային ցանցի անվտանգության ապահովումը.

2) նախարարության համակարգչային ցանցում գործող սարքավորումների անվտանգության ապահովումը.

3) նախարարության և պետական այլ գերատեսչությունների միջև կապի անվտանգության ապահովումը.

4) նախարարությունում գործող համակարգերի անվտանգության ապահովումը.

5) նախարարությունում գործող թվային հեռախոսակայանի անվտանգության ապահովումը.

6) նախարարության կանոնադրությամբ վարչությանը վերապահված այլ գործառույթների իրականացումը.

7) նախարարի և աշխատակազմի ղեկավարի այլ հանձնարարականների կատարումը: